ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2022

02.2022

03.2022

04.2022

**05.2022**
**Մայիս**

06.2022

07.2022

08.2022

09.2022

10.2022

11.2022

12.2022

# ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 30-րդ տարի

# ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2022

Մայիս

թիվ 5 (285)

## Բովանդակություն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

**ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Փրայմ Քրեդիտ» ՎՄ ՓԲԸ ՎԿ, «ԲՐԻԴՋ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ ՆԸ լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՍՏԱԿ ՊՐՈՑԵՍԻՆԳ» ՓԲԸ-ին տրամադրված վճարային գործիքների ու փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԼԱՏՏԵ» ՍՊԸ թիվ 1 մասնաճյուղին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՅՈՒՓԵՅ» ՓԲԸ ՎԿ «Ջրվեժ», «ԻԴՐԱՄ» ՍՊԸ ՎԿ «Սախարով» մասնաճյուղերը հաշվառելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՍՏԱԿ ՄԱՆԻ ՏՐԱՆՍՖԵՐ» ՓԲԸ ՎԿ-ին վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության լիցենզիա տրամադրելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Երևան», «Հայրենիք», «ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ», «Տաշիր», «Նոր Ավան» և «Խաչեն» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը թույլատրելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԱՅՈ» ՈՒՎԿ ՓԲԸ «ԱՋԱՓՆՅԱԿ» մասնաճյուղը գրանցելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու, 3 փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 70Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 77-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 78-Ն որոշումը ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեության կամ գործառնությունների իրականացման թույլտվության տրամադրման կարգի, պայմանների, ժամկետների և թույլտվության տրամադրումը մերժելու հիմքերի վերաբերյալ» կարգը սահմանելու մասին»

18 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ
# ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

## ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

## ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Փրայմ Քրեդիտ» վարկային միություն փակ բաժնետիրական ընկերության վարկային կազմակերպության, «ԲՐԻԴՋ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերություն ներդրումային ընկերության լիցենզիաները (որոշումներ թիվ 71Ա, 82Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՍՏԱԿ ՊՐՈՑԵՍԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված վճարային գործիքների ու փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացման լիցենզիան (որոշում 92Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ԼԱՏՏԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 1 մասնաճյուղին (որոշում թիվ 90Ա):
- ***Հաշվառվել են*** «ՅՈՒՓԵՅ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Ջրվեժ», «ԻԴՐԱՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Սախարով» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 91Ա, 94Ա):
- Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության ***լիցենզիա է տրամադրվել*** «ՍՏԱԿ ՄԱՆԻ ՏՐԱՆՍՖԵՐ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպությանը (որոշում թիվ 92Ա):
- ***Թույլատրվել է*** «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Երևան», «Հայրենիք», «ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ», «Տաշիր», «Նոր Ավան» և «Խաչեն» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/228Ա):
- ***Գրանցվել է*** «ԱՅՈ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «ԱՋԱՓՆՅԱԿ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/251Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի չափով (որոշում թիվ 1/205Ա), 3 փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում՝*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/203Ա, 1/204Ա, 1/208Ա):

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2022 թ. մայիսի 3-ի թիվ 70Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 9.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 10.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 7.75%:

## *Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

***Նպատակ ունենալով*** կազմակերպելու քսան հազար դրամ անվանական արժեքով 2021 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամների շրջանառությունը, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում կանխիկ դրամով իրականացվող գործառնությունները,

***հիմք ընդունելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը և 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը հաստատելու մասին թիվ 40-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի, իսկ Հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան***
***12 մայիսի 2022 թ., N 77-Ն***

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. մայիսի 5-ին (ՀՀԳՏ, 17.05. 2022):*

***Հավելված 1***
***Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի***
***խորհրդի 2022 թվականի մայիսի 5-ի թիվ 77–Ն որոշման***
***«Հավելված 1***

*«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության,*
*հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում*
*գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները»*
*կանոնակարգ 9-ի*

**Թղթադրամների վճարունակությունը որոշելու ցանցի տիպօրինակ**

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |

*Թղթադրամի վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցը տպագրվում է թղթի կամ թափանցիկ ժապավենի վրա՝ տվյալ անվանական արժեքի, տվյալ տարեթվի նմուշի թղթադրամի չափերով: Դա բաղկացած է 200 հավասարաչափ վանդակներից: Վնասված դրամանիշը տեղադրվում է ցանցի վրա և թղթի վրա տպագրված ցանցի դեպքում շուրջը գծվում է՝ կրկնելով թղթադրամի վնասված եզրագիծը, իսկ թափանցիկ ժապավենի վրա տպագրված ցանցի դեպքում ընդհանուր պատկերը լուսածորվում կամ լուսանկարվում է: Շրջագծի երկարությամբ դասավորված վանդակների թվի կեսին ավելացվում է այդ շրջագծի ներսում ընկած վանդակների ընդհանուր քանակը, որից հետո ստացված արդյունքից հանվում է տասնորդական մասը: Դրամանիշը պետք է վճարունակ համարել այն դեպքում, երբ ստացված արդյունքը հավասար կամ մեծ է 120-ից:*

**Թղթադրամների վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցերի չափերը**

| **Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ** | | **Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ** | |
|---|---|---|---|
| Անվանական արժեքը | Չափերը (մմ) | Անվանական արժեքը | Չափերը (մմ) |
| 500 դրամ (1999 թ.) | 129 x 72 | 10 դրամ (1993 թ.) | 125 x 62 |
| 1000 դրամ (1999 թ.) | 136 x 72 | 25 դրամ (1993 թ.) | 125 x 62 |
| 1000 դրամ (2001 թ.) | 136 x 72 | 50 դրամ (1993 թ.) | 125 x 62 |
| 1000 դրամ (2011 թ.) | 136 x 72 | 50 դրամ (1998 թ.) | 122 x 65 |
| 1000 դրամ (2015 թ.) | 136 x 72 | 100 դրամ (1993 թ.) | 135 x 65 |
| 5000 դրամ (1999 թ.) | 143 x 72 | 100 դրամ (1998 թ.) | 122 x 65 |
| 5000 դրամ (2003 թ.) | 143 x 72 | 200 դրամ (1993 թ.) | 135 x 65 |
| 5000 դրամ (2009 թ.) | 143 x 72 | 500 դրամ (1993 թ.) | 135 x 65 |
| 5000 դրամ (2012 թ.) | 143 x 72 | 1000 դրամ (1994 թ.) | 145 x 68 |
| 10000 դրամ (2003 թ.) | 150 x 72 | 5000 դրամ (1995 թ.) | 145 x 71 |
| 10000 դրամ (2006 թ.) | 150 x 72 | 5000 դրամ (1995 թ.) | 145 x 71 |
| 10000 դրամ (2008 թ.) | 150 x 72 | | |
| 10000 դրամ (2012 թ.) | 150 x 72 | | |
| 10000 դրամ (2018 թ.) | 145 x72 | | |
| 20000 դրամ (1999 թ) | 150 x 72 | | |
| 20000 դրամ (2007 թ.) | 155 x 72 | | |
| 20000 դրամ (2009 թ.) | 155 x 72 | | |
| 20000 դրամ (2012 թ.) | 155 x 72 | | |
| 20000 դրամ (2018 թ.) | 150 x 72 | | |
| 20000 դրամ (2021 թ.) | 150 x 72 | | |
| 50000 դրամ (2001 թ.) | 160 x 79 | | |
| 50000 դրամ (2018 թ.) | 155 x 72 | | |
| 100000 դրամ (2009 թ.) | 160 x 72 | | |

»:

***Հավելված 2***
***Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի***
***խորհրդի 2022 թվականի մայիսի 5-ի թիվ 77–Ն որոշման***
***«Հավելված 6***

*«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի*

**Թղթադրամների արմատների փաթեթաթղթերի, կապոցների վրադիրների գույները և արմատների փաթեթաթղթերի չափերը**

| Դրամանիշերն ըստ անվանական արժեքների | Վրադիրի և փաթեթաթղթի գույները | Լայնությունը (մմ) | Երկարությունը (մմ) | Մեկ գծի լայնությունը (մմ) | Գծերի քանակը (հատ) |
|---|---|---|---|---|---|
| 10 դ. | դարչնագույն | 45 | 220 | 4 | 1 |
| 25 դ. | կարմիր | 45 | 220 | 4 | 1 |
| 50 դ. | կապույտ | 45 | 230 | 4 | 1 |
| 100 դ. | դարչնագույն | 45 | 230 | 4 | 2 |
| 200 դ. | կարմիր | 45 | 240 | 4 | 2 |
| 500 դ. | կանաչ | 45 | 240 | 4 | 2 |
| 1000 դ. | դարչնագույն | 50 | 260 | 4 | 3 |
| 5000 դ. | սև | 50 | 260 | 4 | 1 |
| 10000 դ. | կապույտ | 57 | 290 | 10 | 2 |
| 20000 դ. | նարնջագույն | 55 | 260 | 10 | 1 |
| 50000 դ. | մանուշակագույն | 57 | 290 | 10 | 1 |
| 100000 դ. | կանաչ | 57 | 260 | 10 | 1 |

## Թղթադրամների կապոցների վրադիրների չափերը

| Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ | | Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ | |
|---|---|---|---|
| Անվանական արժեքը | Չափերը (մմ) | Անվանական արժեքը | Չափերը (մմ) |
| 500 դրամ (1999 թ.) | 129 x 72 | 10 դրամ (1993 թ.) | 125 x 62 |
| 1000 դրամ (1999 թ.) | 136 x 72 | 25 դրամ (1993 թ.) | 125 x 62 |
| 1000 դրամ (2001 թ.) | 136 x 72 | 50 դրամ (1993 թ.) | 125 x 62 |
| 1000 դրամ (2011 թ.) | 136 x 72 | 50 դրամ (1998 թ.) | 122 x 65 |
| 1000 դրամ (2015 թ.) | 136 x 72 | 100 դրամ (1993 թ.) | 135 x 65 |
| 5000 դրամ (1999 թ.) | 143 x 72 | 100 դրամ (1998 թ.) | 122 x 65 |
| 5000 դրամ (2003 թ.) | 143 x 72 | 200 դրամ (1993 թ.) | 135 x 65 |
| 5000 դրամ (2009 թ.) | 143 x 72 | 500 դրամ (1993 թ.) | 135 x 65 |
| 5000 դրամ (2012 թ.) | 143 x 72 | 1000 դրամ (1994 թ.) | 145 x 68 |
| 10000 դրամ (2003 թ.) | 150 x 72 | 5000 դրամ (1995 թ.) | 145 x 71 |
| 10000 դրամ (2006 թ.) | 150 x 72 | 5000 դրամ (1995 թ.) | 145 x 71 |
| 10000 դրամ (2008 թ.) | 150 x 72 | | |
| 10000 դրամ (2012 թ.) | 150 x 72 | | |
| 10000 դրամ (2018 թ.) | 145 x72 | | |
| 20000 դրամ (1999 թ.) | 150 x 72 | | |
| 20000 դրամ (2007 թ.) | 155 x 72 | | |
| 20000 դրամ (2009 թ.) | 155 x 72 | | |
| 20000 դրամ (2012 թ.) | 155 x 72 | | |
| 20000 դրամ (2018 թ.) | 150 x 72 | | |
| 20000 դրամ (2021 թ.) | 150 x 72 | | |
| 50000 դրամ (2001 թ.) | 160 x 79 | | |
| 50000 դրամ (2018 թ.) | 155 x 72 | | |
| 100000 դրամ (2009 թ.) | 160 x 72 | | |

»:

## ***««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեության կամ գործառնությունների իրականացման թույլտվության տրամադրման կարգի, պայմանների, ժամկետների և թույլտվության տրամադրումը մերժելու հիմքերի վերաբերյալ» կարգը սահմանելու մասին****

***Նպատակ ունենալով*** կանոնակարգելու բանկերի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեության կամ գործառնությունների իրականացման համար թույլտվության տրամադրման ընթացակարգը,

***հիմք ընդունելով*** «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը,

***ղեկավարվելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեության կամ գործառնությունների իրականացման թույլտվության տրամադրման կարգի, պայմանների, ժամկետների և թույլտվության տրամադրումը մերժելու հիմքերի վերաբերյալ» կարգը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան***
***12 մայիսի 2022 թ., N 78-Ն***

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. մայիսի 5-ին (ՀՀԳՏ, 17.05. 2022):*

***Հավելված***
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական բանկի խորհրդի*
*2022 թվականի մայիսի 5-ի*
*թիվ 78-Ն որոշման*

**Կ Ա Ր Գ**

**«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

## ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի (այսուհետ՝ բանկ) կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) ուղղակիորեն չնախատեսված գործունեության կամ գործառնությունների (այսուհետ՝ այլ գործունեություն) իրականացման համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից թույլտվության տրամադրման կարգը, պայմանները, ժամկետները և թույլտվության տրամադրումը մերժելու հիմքերը:

2. Բանկն Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված թույլտվությունը ստանալու նպատակով Կենտրոնական բանկ է ներկայացնում (բացառությամբ՝ սույն կարգի 12-րդ կետով սահմանված դեպքերի).

1) Դիմում՝ համաձայն սույն կարգի Հավելված 1-ի,
2) Հիմնավորում, որ նախատեսվող այլ գործունեությունը բխում կամ սերտորեն կապված է բանկային գործունեության կամ Օրենքի 4-րդ գլխով նախատեսված գործառնությունների հետ, և դրա իրականացումը չի հակասում Օրենքի նպատակներին և չի վտանգում բանկի ավանդատուների և վարկառուների շահերը,
3) Հիմնավորում, որ այդ գործառույթը նորարարական է և(կամ) նպաստում է ֆինանսական համակարգի թվայնացմանը: Մասնավորապես՝ ուղղված է.
   ա. հաճախորդների համար ֆինանսական ծառայությունների մատուցման հասանելիության, արդյունավետության, անվտանգության և որակի բարելավմանը, կամ
   բ. թվային ֆինանսական ծառայությունների արագ զարգացմանը, գլոբալացմանը, կամ
   գ. նոր տեխնոլոգիաների կամ առկա տեխնոլոգիաները նորովի կիրառելու միջոցով ֆինանսական ծառայությունների մատուցմանը, կամ
   դ. Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունների ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը և կիբեռանվտանգության բարձր մակարդակի ապահովմանը, կամ
   ե. ֆինանսավորման կամ ներդրումների համար նոր հնարավորությունների ստեղծմանը:

4) Տեղեկատվություն՝ բանկի կողմից նախատեսվող այլ գործունեության պայմանների վերաբերյալ, այդ թվում՝ այլ գործունեության իրականացման կարգը, ժամկետները, դադարեցման պայմանները,
5) Տեղեկատվություն՝ բանկի կողմից նախատեսվող այլ գործունեությունից ակնկալվող եկամուտների և ծախսերի (միջին տարեկան կտրվածքով կամ բանկի համար ընդունելի այլ ձևաչափով) վերաբերյալ,
6) Վերլուծություն՝ բանկի կողմից նախատեսվող այլ գործունեության իրականացման դեպքում բանկի համար առաջացող ռիսկերի և դրանց նվազեցման համար կիրառվող գործիքների վերաբերյալ,
7) Բանկի և երրորդ անձի (այսուհետ՝ Գործընկեր) միջև կնքվելիք պայմանագրի նախագիծը (Գործընկերոջ առկայության դեպքում),
8) Գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն սույն կարգի Հավելված 2-ի (Գործընկերոջ առկայության դեպքում),
9) Բանկի կողմից նախատեսվող այլ գործունեության իրականացումը կարգավորող ներքին իրավական ակտերը (հաստատված ներքին իրավական ակտ չունենալու դեպքում՝ իրավական ակտի նախագիծը), որոնք պետք է ներառեն նաև այդ գործունեությունը դադարեցնելու (այդ թվում՝ նաև Կենտրոնական բանկի պահանջով) դեպքում բանկի գործողությունների ծրագիրը: Եթե այդ իրավական ակտերը նախկինում ներկայացվել են Կենտրոնական բանկ, ապա սույն կարգի Հավելված 1-ով սահմանված «Դիմումի հետ ներկայացվող փաստաթղթեր» սյունակում նշվում է տվյալ ակտի հղումը:

3. Սույն կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և (կամ) նման այլ բացթողումների առկայության դեպքում Կենտրոնական բանկը դրանց մասին տեղեկացնում է բանկին: Դիմումը ներկայացված է համարվում ճշգրտված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից:

4. Կենտրոնական բանկը, սույն կարգով պահանջվող տեղեկությունների պարզաբանման անհրաժեշտությունից, ինչպես նաև առանձին վերահսկողական նպատակներից ելնելով, կարող է բանկից պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

5. Սույն կարգով պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, պատվիրված նամակով կամ առձեռն՝ Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով:

6. Սույն կարգի 2-րդ կետով սահմանված փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո, մեկամսյա ժամկետում, Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սույն կարգով նախատեսված այլ գործունեության իրականացման թույլտվությունը տրամադրվում է կամ մերժվում: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ և (կամ) պարզաբանումներ ստանալու նպատակով մեկամսյա ժամկետը Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ կարող է կասեցվել երեք ամսից ոչ ավելի ժամկետով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով բանկին: Ժամկետի կասեցման դեպքում փաստաթղթերի քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի փաստաթղթերը ստանալու պահից հետո մեկամսյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

7. Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ մեկամսյա ժամկետում թույլտվության տրամադրումը չմերժելու կամ այդ ժամկետի կասեցման մասին բանկին չտեղեկացնելու դեպքում մեկամսյա ժամկետի ավարտին հաջորդող օրվանից թույլտվությունը համարվում է տրված:

8. Սույն Գլխով սահմանված թույլտվությունը տրվում է որոշակի ժամկետով կամ անժամկետ՝ հիմք ընդունելով բանկի՝ սույն Կարգի 2-րդ կետի համաձայն ներկայացրած հիմնավորումները:

## ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԱՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

9. Կենտրոնական բանկը Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ կարող է մերժել սույն կարգով սահմանված այլ գործունեության իրականացման թույլտվության տրամադրումը, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով.

1) ներկայացված փաստաթղթերը թերի կամ կեղծ են, փաստաթղթերում առկա են անարժանահավատ տեղեկություններ,
2) բանկի կողմից նախատեսվող այլ գործունեությունը չի բխում կամ սերտորեն կապված չէ բանկային գործունեության կամ Օրենքի 4-րդ գլխով նախատեսված գործառնությունների հետ,
3) բանկի կողմից նախատեսվող այլ գործունեության իրականացումը վտանգում կամ կարող է վտանգել բանկի հաճախորդների շահերը կամ բանկի և(կամ) ֆինանսական համակարգի կայունությունը,
4) բանկի կողմից նախատեսվող այլ գործունեության իրականացումը կարող է խոչընդոտել Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը,
5) բանկի կողմից նախատեսվող այլ գործունեության իրականացումը կարող է բանկի համար առաջացնել բիզնես մոդելի, համբավի կամ այլ ռիսկեր,
6) բանկի կողմից նախատեսվող այլ գործունեության իրականացումը չունի նորարարական բնույթ և(կամ) չի նպաստում ֆինանսական համակարգի թվայնացմանը:

10. Այն դեպքում, եթե բանկը ստացել է սույն կարգի Գլուխ 1-ով նախատեսված այլ գործունեության իրականացման թույլտվություն, բանկը պարտավորվում է սույն կարգի 2-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունների յուրաքանչյուր փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին փոփոխությունը տեղի ունենալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Կենտրոնական բանկը կարող է բանկից պահանջել Կենտրոնական բանկի կողմից սահմանված պարբերականությամբ տեղեկացնել նաև սույն կարգի 2-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված տեղեկատվության փոփոխության մասին:

11. Սույն կարգի Գլուխ 1-ի համաձայն տրված թույլտվությունը Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում, եթե բացահայտվել է տեղեկատվություն, որի արդյունքում առաջացել է սույն կարգի 9-րդ կետով սահմանված մերժման հիմքերից որևէ մեկը:

## ԳԼՈՒԽ 3. ԱՌԱՆՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ԴԻՄԵԼՈՒ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

12. Սույն կետով սահմանված գործունեություն իրականացնելու թույլտվությունը համարվում է տրված՝ առանց Կենտրոնական բանկ դիմելու.

1) Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորի գործառույթը,
2) Բանկի կողմից գույքը վարձակալությամբ կամ ենթավարձակալությամբ (այսուհետ՝ վարձակալություն) տրամադրումը, եթե վարձակալությամբ տրամադրման պահի դրությամբ արդեն իսկ վարձակալությամբ տրամադրված և նոր տրամադրվող գույքերի հաշվեկշռային արժեքների հանրագումարը չի գերազանցում տրամադրման ամսաթվին նախորդող ամսվա վերջի դրությամբ հաշվարկված բանկի նորմատիվային հիմնական կապիտալի 5%-ը,

3) Բանկի տարածքը վճարահաշվարկային տերմինալների տեղադրման համար Հայաստանի Հանրապետության տարածքում վճարահաշվարկային գործառնություններ իրականացնելու լիցենզիա ունեցող կազմակերպություններին վարձակալությամբ տրամադրումը,
4) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն արեգակնային էներգիայի աղբյուրով ինքնավար էներգաարտադրող հանդիսացող բանկի և էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև գործառնությունները՝ բանկային գործունեության իրականացման տարածքի համար արտադրվող էլեկտրաէներգիայի փոխանակման շրջանակում:

13. Սույն կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պայմանին չբավարարելու դեպքում բանկը կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ սույն կարգի 2-րդ կետի համաձայն:

14. Կենտրոնական բանկը Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ բանկից պահանջում է սահմանված ժամկետում դադարեցնել սույն կարգի 12-րդ կետով սահմանված գործունեության իրականացումը, եթե բացահայտվել է տեղեկատվություն, որի արդյունքում առաջացել է սույն կարգի 9-րդ կետով սահմանված մերժման հիմքերից որևէ մեկը: Եթե բանկի և Գործընկերոջ միջև կնքված պայմանագրով սահմանվել է դրույթ, որով պայմանագրով նախատեսված գործունեության դադարեցումը բանկի համար կարող է առաջացնել բացասական հետևանք, ապա դա հիմք չէ, որ Կենտրոնական բանկը բանկից չպահանջի սահմանված ժամկետում գործունեությունը դադարեցնել:

*Հավելված 1*

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի ……,

Խնդրում ենք ----------ին
*(բանկի լրիվ անվանումը)*

տրամադրել թույլտվություն ----------
*(գործառնության անվանումը)*

---------- համար:

Դիմումի հետ ներկայացված փաստաթղթերի ցանկը՝
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Իրավասու անձ՝
_____
/բանկի իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը/

____ _____ 20____ թ.

*Հավելված 2*

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| **1. Իրավաբանական անձի տվյալները** | | |
|---|---|---|
| 1.1. Անվանումը _____<br>1.2. Գրանցման հասցեն _____<br>1.3. Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____ համարը _____<br>(օր/ամիս/տարի) | | |
| **2. Տեղեկություններ իրավաբանական անձի ղեկավարների (խորհրդի նախագահ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն և գլխավոր հաշվապահ) վերաբերյալ** | | |
| Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը/հանրային ծառայության համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը | | Պաշտոնը |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| **3. Տեղեկություններ իրավաբանական անձի մասնակիցների վերաբերյալ** | | |
| Մասնակիցների անվանումը/ անունը, ազգանունը | Մասնակցության չափը (դրամով) | Մասնակցության չափը (%) |
| | | |
| | | |
| | | |

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| **Ֆիզիկական անձի տվյալները** | | |
|---|---|---|
| Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը/ հանրային ծառայության համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը | Աշխատավայրը | Պաշտոնը |
| | | |
| | | |
| | | |

# ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՅԻՍ 2022)

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:**

**Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:**

**Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:**

**Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:**

**Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:**

**Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:**

**Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:**

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


Իրական հատվածի ցուցանիշներ ..... 22

*Մակրոտնտեսական ցուցանիշներ*

*Գների փոփոխություն*

*Գնաճ*

*Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին*

*Բնականոն գնաճ*

*Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները*

Արտաքին հատվածի ցուցանիշներ ..... 26

*Ապրանքների արտահանում և ներմուծում*

*Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները*

*Դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի*

*Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք*

*ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)*

*ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)*

*ՀՀ համախառն արտաքին պարտք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)*

*Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը*

*ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը*

Պետական բյուջեի ցուցանիշներ ..... 45

*Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները*

Դրամավարկային ցուցանիշներ ..... 46

*Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ*

*Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ*

*ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ*

*ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ*

*ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ*

*ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ*

*ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ*

*Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում*

Ֆինանսական շուկա ..... 56

*Տոկոսադրույքներ*

*Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը*

*ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ*

*Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը*

*ՀՀ ԿԲ-ի կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները*

*Ռեպո շուկայի շրջանառությունը*

*Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները*

*Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի*

*Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը*

*Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը*

*Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը*

*ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները*

*Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը*

*ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները*
*ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները*
*Արժութային շուկայում իրականացված գործառնությունները*
*Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը*
*Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը*
*Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը*
Վարկային ներդրումներ ..... 76
*Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների*
*Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության*
*Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը*
*Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը*
*Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների*
*ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը*
*Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների*
*Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության*
*Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը*
*Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը*
Առևտրային բանկերի ավանդներ ..... 86
*Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների*
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ ..... 88
*Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը*
*ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը*
*ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը*
*ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը*
*Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը*
*ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը*
*Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ*
*Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ*
*Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ*
*Կառավարման վերցված միջոցներ*
*Պահառության վերցված արժեթղթեր*
*ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը*
*Գրավատների ցուցանիշներ*
*Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ*
Վճարահաշվարկային համակարգ ..... 97
*Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ*
*ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ*
*ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը*
*ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների*
*ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում*

## ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

| Անվանում | 2022 թ. ապրիլ | 2022 թ. ապրիլի իրական աճի փոփոխությունը 2021 թ. ապրիլի նկատմամբ (%) | 2022 թ. մայիս | 2022 թ. մայիսի իրական աճի փոփոխությունը 2021 թ. մայիսի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|
| Տնտեսական ակտիվության ցուցանիշը | | 8.8 | | 13.0 |
| Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն << դրամ)* | 204722.5[1] | 1.7[1] | 203981.8 | 2.0 |
| Շինարարության ծավալը *(մլն << դրամ)* | 25299.2 | 15.6 | 30788.6 | 18.1 |
| Առևտրի շրջանառության ծավալը *(մլն << դրամ)* | 305450.2 | 8.6 | 334838.3 | 12.4 |
| Ծառայությունների ծավալը *(մլն << դրամ)* | 194968.0 | 27.1 | 208435.5 | 30.2 |
| Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)* | 677.1 | 5.8 | 603.0 | 8.2 |
| Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(<< դրամ)* | 268990[1] | 1.2[2] | 272578[3] | 1.9[4] |

## ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

| 2022 թ. | Գնաճ | Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը | Գների փոփոխությունը շինարարությունում | Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| *նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | | | |
| Հունվար | 1.6 | 0.9 | 0.8 | 4.0 |
| Փետրվար | 0.1 | 3.7 | 1.3 | 0.2 |
| Մարտ | 1.8 | 2.0 | -0.8 | -0.2 |
| Ապրիլ | 2.3 | -2.4 | 0.5 | -1.3 |
| Մայիս | 0.1 | -3.1 | 1.0 | -4.5 |
| 2022 թ. հունվար - մայիսը<br>2021 թ. հունվար - մայիսի նկատմամբ | 7.7 | 9.6 | 11.5 | 19.9 |

## ԳՆԱՃ

| Ժամանակաշրջան | 2020 | 2021 | 2022 |
|---|---|---|---|
| *նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | | |
| Հունվար | 1.4 | 2.2 | 1.6 |
| Փետրվար | -0.2 | 0.6 | 0.1 |
| Մարտ | 0.5 | 1.0 | 1.8 |
| Ապրիլ | 0.9 | 1.3 | 2.3 |
| Մայիս | -0.1 | -0.4 | 0.1 |
| Հունիս | -1.4 | -0.8 | |
| Հուլիս | -2.1 | -0.5 | |
| Օգոստոս | -0.1 | 0.4 | |
| Սեպտեմբեր | -0.2 | -0.1 | |
| Հոկտեմբեր | 0.5 | 0.7 | |
| Նոյեմբեր | 1.3 | 1.7 | |
| Դեկտեմբեր | 3.4 | 1.6 | |
| *նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)* | | | |
| Հունվար | 0.3 | 4.5 | 7.1 |
| Փետրվար | -0.5 | 5.3 | 6.5 |
| Մարտ | -0.1 | 5.8 | 7.4 |
| Ապրիլ | 0.9 | 6.2 | 8.4 |
| Մայիս | 1.2 | 5.9 | 9.0 |
| Հունիս | 1.7 | 6.5 | |
| Հուլիս | 1.5 | 8.2 | |
| Օգոստոս | 1.8 | 8.8 | |
| Սեպտեմբեր | 1.4 | 8.9 | |
| Հոկտեմբեր | 1.3 | 9.1 | |
| Նոյեմբեր | 1.6 | 9.6 | |
| Դեկտեմբեր | 3.7 | 7.7 | |

## ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՃԻՆ [5]

| Անվանում | 2022 թ. մայիսը 2021 թ. մայիսի նկատմամբ (%) | Նպաստումը գնաճին (փոկոսային կետ) |
|---|---|---|
| **Գնաճ** | **9.0** | |
| Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք | 14.5 | 5.47 |
| Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ | 7.7 | 0.29 |
| Հագուստ և կոշիկ | 8.4 | 0.18 |
| Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ | 6.7 | 1.06 |
| Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն | 6.0 | 0.27 |
| Առողջապահություն | 0.8 | 0.06 |
| Տրանսպորտ | 8.6 | 0.82 |
| Կապ | 0.4 | 0.02 |
| Հանգիստ և մշակույթ | 13.3 | 0.23 |
| Կրթություն | 1.5 | 0.06 |
| Ռեստորաններ և հյուրանոցներ | 5.6 | 0.06 |
| Տարբեր ապրանքներ և ծառայություններ | 6.0 | 0.38 |

## ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

| Ժամանակաշրջան | 2020 | 2021 | 2022 |
|---|---|---|---|
| *նախորդ ամսվա նկատմամբ (%)* | | | |
| Հունվար | 0.0 | 0.7 | 0.3 |
| Փետրվար | 0.1 | 0.8 | 0.6 |
| Մարտ | 0.0 | 0.8 | 1.1 |
| Ապրիլ | 0.5 | 0.6 | 1.3 |
| Մայիս | 0.0 | 0.4 | 0.7 |
| Հունիս | -0.1 | 0.3 | |
| Հուլիս | -0.1 | 0.3 | |
| Օգոստոս | 0.1 | 0.3 | |
| Սեպտեմբեր | 0.3 | 0.3 | |
| Հոկտեմբեր | 0.3 | 0.4 | |
| Նոյեմբեր | 0.3 | 0.6 | |
| Դեկտեմբեր | 0.9 | 0.5 | |
| *նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)* | | | |
| Հունվար | 0.4 | 3.0 | 5.8 |
| Փետրվար | 0.4 | 3.7 | 5.6 |
| Մարտ | 0.3 | 4.6 | 5.9 |
| Ապրիլ | 0.8 | 4.6 | 6.6 |
| Մայիս | 0.8 | 5.1 | 7.0 |
| Հունիս | 0.7 | 5.5 | |
| Հուլիս | 0.8 | 5.9 | |
| Օգոստոս | 0.8 | 6.1 | |
| Սեպտեմբեր | 0.9 | 6.1 | |
| Հոկտեմբեր | 1.2 | 6.2 | |
| Նոյեմբեր | 1.4 | 6.6 | |
| Դեկտեմբեր | 2.2 | 6.2 | |

## ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

| Անվանում | 2022 թ. մայիսը 2021 թ. մայիսի նկատմամբ | Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ) |
|---|---|---|
| **Բնականոն գնաճ, այդ թվում՝** | **7.0** | |
| Հաց ցորենի՝ բարձր տեսակի | 14.6 | 0.63 |
| Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար | 7.0 | 0.41 |
| Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած | 12.8 | 0.40 |
| Պանիր կովի կաթից | 22.5 | 0.32 |
| Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար | 29.6 | 0.29 |
| Միջազգային հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ | 29.8 | 0.16 |
| Բենզին | 18.4 | 0.15 |
| Մածուն | 24.0 | 0.14 |
| Պանիր տնական | 24.8 | 0.14 |
| Ալյուր ցորենի՝ բարձր տեսակի | 13.5 | 0.13 |
| Թթվասեր | 14.2 | 0.11 |
| Իշխան՝ թարմ կամ պաղեցրած | 18.5 | 0.11 |
| Հավի միս (ամբողջական հավ)՝ թարմ, պաղեցրած | 8.6 | 0.11 |
| Հնդկացորեն | 41.7 | 0.10 |
| Լվացքի փոշի ավտոմատ մեքենայի համար | 6.4 | 0.09 |

*[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:*

*[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայած տվյալների հիման վրա:*

*[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:*

*[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:*

*[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:*

*[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:*

## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

| Անվանում | 2022 թ. հունվար – ապրիլ (մլն ԱՄՆ դոլար) | 2022 թ. հունվար - ապրիլը 2021 թ. հունվար - ապրիլի նկատմամբ (%) | 2022 թ. հունվար – մայիս (մլն ԱՄՆ դոլար) | 2022 թ. հունվար - մայիսը 2021 թ. հունվար - մայիսի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|
| Արտահանում (ՖՕԲ) | 1025.7 | 125.2 | 1385.5 | 127.5 |
| Ներմուծում (ՍԻՖ) | 1881.3 | 139.1 | 2527.9 | 142.2 |
| Առևտրային հաշվեկշռի պակասուրդ | 855.6 | 160.5 | 1142.4 | 180.1 |

## ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

*հազար ԱՄՆ դոլար*

| Երկիր | 2021 թվական | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մայիս | | | հունվար – մայիս | | |
| | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք |
| Ռուսաստանի Դաշնություն | 72078 | 32518 | 39560 | 289678 | 153625 | 136054 |
| ԱՄՆ | 46029 | 20555 | 25474 | 211952 | 77594 | 134358 |
| Ուկրաինա | 1318 | 1388 | -70 | 6636 | 6930 | -294 |
| Ղազախստան | 8909 | 372 | 8537 | 30260 | 1879 | 28381 |
| Գերմանիա | 4827 | 1941 | 2886 | 29241 | 13193 | 16048 |
| Իսպանիա | 1008 | 674 | 334 | 6271 | 5688 | 583 |
| Ֆրանսիա | 7468 | 2218 | 5249 | 25254 | 8054 | 17200 |
| ԱՄԷ | 1514 | 2272 | -758 | 7853 | 13103 | -5250 |
| Չինաստան | 171 | 6107 | -5937 | 871 | 26572 | -25700 |
| Թուրքիա | 100 | 377 | -278 | 735 | 1963 | -1228 |
| Այլ երկրներ | 31433 | 28161 | 3272 | 139611 | 158302 | -18690 |
| **Ընդամենը** | **174854** | **96583** | **78271** | **748363** | **466902** | **281461** |

*հազար ԱՄՆ դոլար*

| Երկիր | 2022 թվական | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մայիս | | | հունվար – մայիս | | |
| | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք |
| Ռուսաստանի Դաշնություն | 266213 | 27478 | 238735 | 679403 | 182468 | 496935 |
| ԱՄՆ | 57598 | 20555 | 37043 | 256668 | 104453 | 152215 |
| Ուկրաինա | 28 | 2533 | -2505 | 3559 | 7938 | -4379 |
| Ղազախստան | 6207 | 892 | 5315 | 23048 | 3062 | 19985 |
| Գերմանիա | 7704 | 8513 | -809 | 30090 | 22979 | 7111 |
| Իսպանիա | 1232 | 3444 | -2211 | 6588 | 11890 | -5302 |
| Ֆրանսիա | 3656 | 2872 | 784 | 25710 | 12735 | 12975 |
| ԱՄԷ | 3083 | 15866 | -12783 | 12609 | 60604 | -47995 |
| Չինաստան | 319 | 7916 | -7597 | 1086 | 29254 | -28168 |
| Թուրքիա | 209 | 466 | -257 | 658 | 3888 | -3231 |
| Այլ երկրներ | 65866 | 55632 | 10234 | 232857 | 220619 | 12238 |
| **Ընդամենը** | **412116** | **146167** | **265949** | **1272276** | **659892** | **612384** |

## ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

*մլն ՀՀ դրամ*

| Երկիր | 2021 թվական | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մայիս | | | հունվար – մայիս | | |
| | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք |
| Ռուսաստանի Դաշնություն | 37574 | 16952 | 20621 | 151773 | 80529 | 71244 |
| ԱՄՆ | 23998 | 10713 | 13285 | 111087 | 40600 | 70487 |
| Ուկրաինա | 687 | 724 | -37 | 3477 | 3635 | -159 |
| Ղազախստան | 4645 | 194 | 4451 | 15857 | 987 | 14870 |
| Գերմանիա | 2516 | 1012 | 1504 | 15333 | 6915 | 8418 |
| Իսպանիա | 525 | 351 | 174 | 3284 | 2989 | 295 |
| Ֆրանսիա | 3892 | 1157 | 2734 | 13220 | 4217 | 9004 |
| ԱՄԷ | 789 | 1184 | -395 | 4114 | 6862 | -2748 |
| Չինաստան | 89 | 3184 | -3095 | 456 | 13925 | -13469 |
| Թուրքիա | 52 | 197 | -145 | 385 | 1027 | -642 |
| Այլ երկրներ | 16385 | 14679 | 1706 | 73132 | 82795 | -9663 |
| **Ընդամենը** | **91152** | **50348** | **40804** | **392120** | **244481** | **147639** |

*մլն ՀՀ դրամ*

| Երկիր | 2022 թվական | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մայիս | | | հունվար – մայիս | | |
| | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք | Ներհոսք | Արտահոսք | Զուտ ներհոսք |
| Ռուսաստանի Դաշնություն | 121454 | 12533 | 108922 | 320000 | 87604 | 232396 |
| ԱՄՆ | 26388 | 9406 | 16982 | 122681 | 49910 | 72771 |
| Ուկրաինա | 13 | 1153 | -1140 | 1712 | 3756 | -2044 |
| Ղազախստան | 2837 | 404 | 2434 | 10903 | 1453 | 9450 |
| Գերմանիա | 3513 | 3911 | -398 | 14296 | 10895 | 3401 |
| Իսպանիա | 564 | 1565 | -1001 | 3145 | 5619 | -2474 |
| Ֆրանսիա | 1674 | 1310 | 363 | 12373 | 6103 | 6271 |
| ԱՄԷ | 1412 | 7241 | -5830 | 5998 | 28813 | -22815 |
| Չինաստան | 145 | 3620 | -3476 | 515 | 13890 | -13375 |
| Թուրքիա | 96 | 212 | -117 | 312 | 1867 | -1556 |
| Այլ երկրներ | 30057 | 25439 | 4618 | 110826 | 104982 | 5844 |
| **Ընդամենը** | **188152** | **66794** | **121358** | **602761** | **314893** | **287869** |






## ԴԵՊԻ ՀՀ ԱՆՁՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ

*մլն ԱՄՆ դոլար*

| Ցուցանիշներ | 2021 | | | | | 2022 |
|---|---|---|---|---|---|---|
| | I եռ. | II եռ. | III եռ. | IV եռ. | Տարեկան | I եռ. |
| **Դրամական փոխանցումներ** | **316.8** | **423.5** | **450.4** | **421.0** | **1611.6** | **275.8** |
| Աշխատողների զուտ աշխատավարձ[1] | 63.6 | 84.6 | 89.5 | 82.9 | 320.6 | 68.5 |
| Աշխատողների աշխատավարձ[2] | 81.9 | 108.9 | 115.3 | 106.8 | 412.8 | 88.3 |
| Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ[3] | 12.7 | 16.9 | 17.9 | 16.5 | 63.9 | 13.7 |
| Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված համախառն եկամուտներ | 16.3 | 21.7 | 23.0 | 21.3 | 82.3 | 17.6 |
| Անձնական տրանսֆերտներ | 233.4 | 310.4 | 328.8 | 306.9 | 1179.5 | 186.4 |
| Կապիտալ տրանսֆերտներ | 7.0 | 11.6 | 14.2 | 14.7 | 47.6 | 7.2 |

*[1] Զուտ աշխատավարձը/եկամուտը սեզոնային աշխատողների կողմից ստացված աշխատավարձն է/եկամուտն է՝ առանց եկամտահարկի, տրանսպորտային ծախսերի և արտերկրում կատարված այլ ծախսումների:*
*[2] Ներառված չեն վճարային հաշվեկշռի համար կատարված այլ լրահաշվարկները, մասնավորապես՝ ՀՀ տարածքում տեղաբաշխված անկլավային տարածքում ռեզիդենտ աշխատողների ստացած աշխատավարձերը:*
*[3] Արտերկիր սեզոնային աշխատանքի մեկնողների մի մասի ստացած եկամուտը դասակարգվում է ոչ թե որպես աշխատավարձ, այլ որպես ծառայությունների արտահանում, քանի որ նրանց դեպքում չկան գործատու-աշխատող հարաբերություններ: Գնահատականը տրված է 2011 թվականից՝ հիմնվելով հարցումների տվյալների վրա:*

## ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

| 2021 | Հ | Փ | Մ | Ա | Մ | Հ | Հ | Օ | Ս | Հ | Ն | Դ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100) | 140.1 | 139.6 | 140.5 | 142.9 | 140.4 | 140.8 | 147.6 | 147.6 | 147.5 | 150.3 | 154.8 | 157.1 |
